


Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Հուլիսին ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսներից դրական արդյունք գրանցեց միայն Dow Jones արդյունաբերական ցուցանիշը:



Նախորդ ամսվա ընթացքում Բիթքոինի գինը բարձրացավ:




Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ


Նախորդ ամիս ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները աճեցին:




Ոլորտների շրջանում լավագույն արդյունքը գրանցեցին էներգակիրները:



Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 1.10%-ով




Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 0.55%-ով



Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 1.07% -ով



Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 0.01%-ով



Չնայած հուլիսին շուկաներում պահպանվող բարձր անկայունությանը՝ S&P 500-ը ամիսն ավարտեց աննշան անկումով, իսկ Nasdaq-ը՝ արձանագրեց ամենաթույլ արդյունքը 2025 թվականի մարտից ի վեր: Շուկայի վրա հիմնական ազդեցությունն ունեցան AI ոլորտի շուրջ մտահոգությունները, ԴՊՀ-ի քաղաքականության անորոշությունը, աշխարհաքաղաքական ռիսկերը և 2026 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Միևնույն ժամանակ Dow Jones ինդեքսը միակն էր, որ արձանագրեց դրական եկամտաբերություն:



Էներգետիկայի ոլորտը արձանագրեց ամսվա ամենամեծ աճը, մինչդեռ տեխնոլոգիական և նյութերի ոլորտները արձանագրեցին ամենախորը անկումը:



Նախորդ ամիս ոչ բոլոր հատվածներն էին, որ գտնվում էին ճնշման տակ, ծրագրային ապահովման ընկերությունների բաժնետոմսերն արձանագրեցին ավելի քան 19% աճ:

Կիսահաղորդչային ընկերությունների բաժնետոմսերը կտրուկ նվազել են, բայց տարվա սկզբից ի վեր եկամտաբերությունը դրական է:



Apple (AAPL)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում ստացել է 109.4 մլրդ դոլարի հասույթ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածից բարձր է մոտ 10%-ով և գերազանցել է շուկայի սպասումները: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 2.02 դոլար՝ iPhone-ների և Mac համակարգիչների բարձր վաճառքների շնորհիվ: Միաժամանակ ընկերությունը զգուշացրել է հիշողության չիպերի թանկացման և մատակարարման սահմանափակումների մասին, ինչի հետևանքով հաջորդ եռամսյակի կանխատեսումը որոշ չափով հիասթափեցրել է ներդրողներին:



Microsoft (MSFT)-ը հայտնել է, որ 2026 թվականի երկրորդ եռամսյակի հասույթը կազմել է 90.0 մլրդ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարձր է մոտ 18%-ով և գերազանցել է շուկայի սպասումները: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 4.74 դոլար, իսկ Azure ամպային հարթակի հասույթն աճել է 43%-ով՝ AI ծառայությունների բարձր պահանջարկի շնորհիվ: Ընկերությունը հայտնել է, որ իր AI բիզնեսի տարեկան եկամտային ծավալն արդեն գերազանցում է 37 մլրդ դոլարը, իսկ պատվերների պորտֆելը (Commercial RPO) հասել է ռեկորդային 678 մլրդ դոլարի:



Amazon (AMZN)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում ստացել է 200.6 մլրդ դոլարի հասույթ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարձր է մոտ 14%-ով և գերազանցել է շուկայի սպասումները: Աճի հիմնական շարժիչը եղել է Amazon Web Services (AWS)-ը, որի հասույթն աճել է 37%-ով, իսկ գովազդային բիզնեսը շարունակել է երկնիշ աճը: Ընկերությունը հայտարարել է, որ 2026 թվականի կապիտալ ծախսերը կհասնի մինչև 220 մլրդ դոլար՝ AI ենթակառուցվածքների և ամպային ծառայությունների ընդլայնման համար:


Meta Platforms (META)-ը հայտնել է, որ 2026 թվականի երկրորդ եռամսյակի հասույթը կազմել է 60.8 մլրդ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածից ավելի է մոտ 28%-ով և փոքր-ինչ գերազանցել է շուկայի սպասումները՝ գովազդային բիզնեսի կայուն աճի շնորհիվ: Սակայն մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 6.18 դոլար, որը նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 13%-ով, քանի որ ընկերությունը զգալիորեն ավելացրել է արհեստական բանականության և տվյալների կենտրոնների զարգացման ծախսերը: Meta-ն վերահաստատել է, որ շարունակելու է խոշոր ներդրումները:



2026 թվականի տոկոսադրույքների բարձրացման սպասումները նվազեցին՝ վերացնելով Ուորշի առաջին FOMC նիստից հետո ձևավորված աճի մոտ կեսը: Սա վկայում է, որ շուկան ավելի մեծ ուշադրություն է դարձրել գնաճային ռիսկերին և երկարաժամկետ տնտեսական հեռանկարին, քան ԴՊՀ-ի կողմից մոտակա դրամավարկային քաղաքականության խստացման հավանականությանը:



Դաշնային բաց շուկայի կոմիտեի (FOMC) նիստից հետո ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները կտրուկ աճել են, հատկապես՝ երկարաժամկետ (10 և 30 տարի) հատվածում: Սա ցույց է տալիս, որ շուկան վերագնահատել է տոկոսադրույքների և գնաճի վերաբերյալ սպասումները:



ԱՄՆ դոլարը ամբողջությամբ կորցնեց Ուորշի առաջին Դաշնային Բաց Շուկայի Կոմիտեի (FOMC) նիստի արդյունքում արձանագրած աճը:

Չնայած ԱՄՆ դոլարի թուլացմանը՝ ոսկին հուլիսին էական տեղաշարժ չգրանցեց:



Brent տեսակի նավթի ֆյուչերսների մոտակա պայմանագրերը, որոնք լավագույնս արտացոլում են ֆիզիկական նավթի շուկայի իրավիճակը, հուլիսին զգալիորեն թանկացան՝ մեկ բարելի դիմաց կրկին բարձրանալով 91 դոլարից վեր: Միաժամանակ շուկայում պահպանվեց backwardation-ի խորացումը, ինչը ցույց է տալիս, որ ներդրողները գնահատում են կարճաժամկետ մատակարար-ման սղության ռիսկերը և ակնկալում են նավթի բարձր պահանջարկ առաջիկա ամիսներին:

@CL - 60 min NYMEX L=84.59 1.00 1.20% TS=1 TE=NYMEX B=84.58 BS=1 A=84.59 AS=3 O=83.92 Hi=86.45 Lo=81.06 V=179,434




Բիթքոինը հուլիսին
ավարտեց դրական
եկամտաբերությամբ՝
գերազանցելով 66,000
դոլարի մակարդակը:



ԱՄՆ-ում կիսահաղորդչային ETF-ների օրական առևտրի ծավալը հասել է 50 մլրդ դոլարի՝ 2025 թվականի հունվարից ի վեր աճելով ավելի քան 4 անգամ: Հունիսին այն նույնիսկ գրանցել է ռեկորդային 75 մլրդ դոլարը, իսկ 20-օրյա միջին ցուցանիշը կազմում է 38 մլրդ դոլար: Համեմատության համար՝ 2021-2022 թվականներին օրական առևտրի ծավալը չէր գերազանցում 10 մլրդ դոլարը: Այսօր կիսահաղորդչային ETF-ները շուկայի հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

OVER \$50 BN OF SEMIS ETFs TRADED RECENTLY




30-ամյա ամերիկյան պարտատոմսերի եկամտաբերությունը հասել է 5.27%-ի: Վերջին անգամ, ԱՄՆ երկարաժամկետ պարտատոմսերի նման բարձր եկամտաբերություն գրանցվել էր 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամից առաջ: ԱՄՆ պետական պարտատոմսերի 5% կամ ավելի եկամտաբերությունը պատմականորեն համարվել է «վախեցնող հոգեբանական» մակարդակ ոչ միայն պարտատոմսերի, այլև ռիսկային ակտիվների համար:



ԱՄՆ-ի շուկան շարունակում է մնալ լավագույն միջավայրերից մեկը: ԱՄՆ-ում նորաստեղծ ընկերությունների 51%-ը գործում է առնվազն 5 տարի, ինչը ամենաբարձր ցուցանիշն է Apollo-ի վերլուծած խոշոր տնտեսությունների շարքում: Համեմատության համար՝ ԵՄ-ում այդ ցուցանիշը 46% է, Մեծ Բրիտանիայում՝ 38%, իսկ Գերմանիայում՝ 37%: Այս առավելությունը պայմանավորված է զարգացած կապիտալի շուկաներով, ավելի ճկուն աշխատաշուկայով և բիզնեսի աճին նպաստող միջավայրով:


US businesses last longer



ԱՄՆ պետական պարտքը մեկ տարվա ընթացքում աճել է 3.6 տրիլիոն դոլարով, այն բանից հետո, երբ Թրամփը ստորագրեց իր «Մեծ, գեղեցիկ օրինագիծը» 2025 թվականի հուլիսի սկզբին, որով պարտքի առաստաղը բարձրացավ 5 տրիլիոն դոլարով: Թրամփի 2024 թվականի քարոզարշավի նպատակներից մեկը ԱՄՆ պետական պարտքի կրճատումն էր: Սակայն Թրամփի օրոք պետական պարտքը ոչ միայն շարունակել է աճել, այլև աճել է ԱՄՆ պատմության մեջ ռեկորդային տեմպերով: Շատ փորձագետներ՝ սկսած Rockefeller Capital Management-ի գործադիր տնօրենից մինչև Ռեյ Դալիո, ահազանգում են ԱՄՆ պարտքի արագ աճի մասին: Դալիոն վերջերս հայտարարել է, որ ԱՄՆ-ն մոտ է «անվերադարձ կետին» պետական պարտքի առումով:

US National Debt Since the Debt Ceiling Was Raised by \$5 Trillion

(Data in Trillions via Treasury.gov)




Արհեստական բանականությամբ ստեղծված նյութերը արագորեն տարածվում է, սակայն դրա արդյունավետությունը դեռևս զիջում է մարդկային հեղինակած նյութերին:

Վերջին ուսումնասիրության համաձայն՝ ԱԲ-ն արդեն ստեղծում է LinkedIn-ի հրապարակումների 41%-ը, Reddit-ի՝ 13%-ը և Substack-ի՝ 10%-ը: Միաժամանակ, LinkedIn-ում ԱԲ-ով գրված հրապարակումները միջինում ստանում են 45%-ով պակաս ներգրավվածություն, քան մարդկանց կողմից ստեղծված նյութերը: Սա ցույց է տալիս, որ սոցիալական ցանցերում մարդկային, ինքնատիպ բովանդակությունը շարունակում է մնալ կարևոր մրցակցային առավելություն:

Ֆինանսների դեկավարների 86%-ը կարծում է, որ ԱԲ հմտություններն ավելի արժեքավոր են, քան MBA-ը:

AI Generated Content Market
Size, by Content Type, 2023 - 2033 (USD Billion)



Այս շաբաթ 1260 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի առաջին եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Space Exploration Technologies (SPCX), Eli Lilly (LLY), Advanced Micro Devices (AMD), Caterpillar (CAT), HSBC Holdings (HSBC), Palantir Technologies (PLTR), Sandisk Corporation (SNDK), McDonald's Corporation (MCD), Toyota Motor Corporation (TM) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price
1	 SPCX	Space Exploration Technologies Corp	Industrials	Aerospace & Defense	USA	1500.11B	-	113.07
2	 LLY	Lilly(Eli) & Co	Healthcare	Drug Manufacturers - General	USA	1084.89B	41.47	1152.00
3	 AMD	Advanced Micro Devices Inc	Technology	Semiconductors	USA	823.75B	165.80	505.18
4	 CAT	Caterpillar Inc	Industrials	Farm & Heavy Construction Machinery	USA	384.63B	41.54	834.99
5	 HSBC	HSBC Holdings plc ADR	Financial	Banks - Diversified	United Kingdom	365.28B	17.56	106.29
6	 MRK	Merck & Co Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	319.15B	36.37	129.22
7	 PLTR	Palantir Technologies Inc	Technology	Software - Infrastructure	USA	293.24B	137.81	122.32
8	 ANET	Arista Networks Inc	Technology	Computer Hardware	USA	220.46B	59.95	175.08
9	 AMGN	AMGEN Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	208.65B	26.89	386.60
10	 TM	Toyota Motor Corp ADR	Consumer Cyclical	Auto Manufacturers	Japan	202.23B	9.71	190.06
11	 SNDK	Sandisk Corp	Technology	Computer Hardware	USA	199.11B	46.74	1344.53
12	 WDC	Western Digital Corp	Technology	Computer Hardware	USA	192.85B	33.40	559.50
13	 MCD	McDonald's Corp	Consumer Cyclical	Restaurants	USA	190.64B	22.12	268.32
14	 DIS	Walt Disney Co	Communication Services	Entertainment	USA	166.78B	15.37	96.04
15	 GILD	Gilead Sciences Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	163.25B	17.89	131.49
16	 NVO	Novo Nordisk ADR	Healthcare	Drug Manufacturers - General	Denmark	158.92B	11.11	47.32
17	 SHOP	Shopify Inc	Technology	Software - Application	Canada	158.51B	120.07	122.15
18	 BKNG	Booking Holdings Inc	Consumer Cyclical	Travel Services	USA	150.86B	25.60	194.69
19	 COP	Conoco Phillips	Energy	Oil & Gas E&P	USA	145.31B	20.28	119.27
20	 UBER	Uber Technologies Inc	Technology	Software - Application	USA	142.45B	17.44	69.98

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, AUG. 3					
9:45 am	S&P final U.S. manufactoring PMI	July	--		53.8
10:00 am	ISM manufactoring	July	54.0%		53.3%
10:00 am	Construction spending	June	0.3%		0.1%
TBA	Auto sales	July	--		16.5 million
TUESDAY, AUG. 4					
8:30 am	U.S. trade balance	June	-\$73.0B		-\$77.6B
10:00 am	Factory orders	June	0.3%		-1.3%
10:00 am	Job openings	June	7.5 million		7.6 million
8:15 pm	Kansas City Fed President Jeff Schmid speaks				
WEDNESDAY, AUG. 5					
8:15 am	ADP employment	July	75,000		98,000
9:45 am	S&P final U.S. services PMI	July	--		53.6
10:00 am	ISM services	July	54.4%		54.0%
THURSDAY, AUG. 6					
8:30 am	Initial jobless olaims	Aug. 1	200,000		197,000
8:30 am	U.S. productivity	Q2	0.7%		0.3%
10:00 am	Wholesale inventories	June	--		0.1%
FRIDAY, AUG. 7					
8:30 am	U.S. employment report	July	85,000		57,000
8:30 am	U.S. unemployment rate	July	4.3%		4.2%
8:30 am	U.S. hourly wages	July	0.3%		0.35%
8:30 am	Hourly wages year over year		--		3.5%
10:00 am	Richmond Fed President Tom Barkin speaks				
3:00 pm	Consumer credit	June	\$12.0B		-\$0.2 billion

